Խ.ԱԲՈՎՅԱՆԻ «ՆԱԽԱՇԱՎԻՂ» ԴԱՍԱԳՐՔԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ,

ՀՀ, Երևան, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,

էլ.հասցե՝ *gayane.khalatyan.1958@mail.ru*

DOI: 10.24234/scientific.v1i43.10

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննել ենք Խ.Աբովյանի «Նախաշավիղ» դպրոցական դասագրքի դերը հայ դպրոցում ու մանկավարժության մեջ: Աբովյանը դպրոց ներմուծեց աշխարհիկ բովանդակությամբ, ժողովրդական լեզվով դասագիրք՝ ընդօրինակման և բովանդակության շարադրման համար առաջադիր նյութերով, քերականական վարժություններով, կանոններով, որոնք սերտորեն կապված են ընթերցանության, գրելու, կարդալու բնագրերի հետ: Ի տարբերություն նախորդների՝ Աբովյանը առաջադրում է կազմել մարդասիրական գաղափարներով ձեռնարկներ՝ առավելապես հիմնված մայրենի լեզվի ուսուցման և գրաճանաչության հնչական մեթոդի կիրառման վրա: Հեղինակն այս համատեքստում մշակում է մեթոդական, դիդակտիկական, հոգեբանական, մանկավարժական նոր համակարգ՝ առաջնայինը համարելով դասի ընդհանուր և ակնհայտ նպատակի որոշակիությունը, մեթոդի՝ իրավիճակին համարժեք ընտրությունը, ուսուցման սկզբունքները, դասի բովանդակությունը: Ժամանակակից պահանջներից ելնելով՝ առաջնահերթ են մեծ լուսավորչի առաջադիր դրույթները, դիդակտիկայի հարցերին նվիրված մեկնաբանությունները՝ կարևորելով զննականության սկզբունքը, քանի որ երեխայի տեսածը, շոշափածը բովանդակություն են հաղորդում սովորած բառերին և հասկացություններին: Բացի դրանից, Աբովյանը կարևորում է նաև գիտակցականության սկզբունքը և երեխաների ինքնուրույն մտածելու կարողությունը, որը, ի դեպ, ուղղակիորեն կապվում է ինչպես տրամաբանության,

այնպես էլ հոգեկան գործընթացների ակտիվացման հետ:

Մեր նպատակն է ուսուցման առաջնահերթությունների մեջ մուծել Խ. Աբովյանի առաջադիր մանկավարժական դիդակտիկական սկզբունքները և կիրառել արդի կրթական համակարգում: Դրանք կնպաստեն դասագործընթացում նյութի դյուրին յուրացմանը և ուսուցչի կողմից մեթոդական հնարների ճշգրիտ գործադրմանը:

Բանալի բառեր. հնչական մեթոդ, դիդակտիկա, զննականություն, գիտակցականության սկզբունք, տրամաբանություն, հոգեբանական սկզբունք, գործնականություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աբովյանագիտության վերաբերյալ առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ, հատկապես մանկավարժագիտության բնագավառում, որոնք առկա բովանդակությամբ, մեթոդական աշխատանքների կազմակերպման հրատապությամբ շարունակում են պահպահել իրենց արդիականությունն առ այսօր: Այս իմաստով հետաքրքիր են նաև «Նախաշավիղ» դասագրքի մանկավարժական դրույթները, որոնց անդրադարձել են նաև Ռ. Զարյանը «Նախաշավիղ»-ի առաջաբանում, այնուհետև Ա. Տեր-Գրիգորյանը «Մանկավարժական դիմանկարներ» գրքում: Վերոնշյալ վերլուծաբանները կարևորում են հատկապես ազգային ինքանաճանաչողությունը և դասագրքի մեթոդական հագեցվածությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեթոդաբանությունը՝ որպես հիմնախնդրի ուսումնասիրման տեսական մոտեցումներ, սկզբունքներ, պատճառականություն և ուսումնասիրման մեթոդների համակարգ, դիտարկելի է «Նախաշավիղ» դպրոցական դասագրքին, քանի որ առաջին հերթին դասագրքում կիրառված են լեզվաբանության համեմատական մեթոդը, մանկավարժության նորովի պարզաբանման սկզբունքները և ուսուցման արդյունավետ կազմակերպման առանձնահատուկ դրսևորումները նոր պայմաններում, քանի որ ազգային ինքնաճանաչողությունը տեսական և գործնական իմաստով նոր մոտեցում է՝ հակակշիռ պահպանողական մանկավարժության դոգմատիկ պատկերացումներին: Այս ամենն ուղղակիորեն երևում է դասագրքում, հատկապես այն հատվածներում, որտեղ Աբովյանը

երեխաների ձեռքից վերցնում է ժամագրքերը, շարականներով և կրոնական տաղերով լի գրաբարալեզու ձեռնարկները և դրանց փոխարեն գործածության մեջ է դնում աշխարհիկ բովանդակության և ժողովրդական լեզվով գրված դասագիրքը (Աբովյան Խ., 1940):

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դասագիրքը պարունակում է ընդօրինակման և բովանդակության շարադրման համար առաջադրված հակիրճ հոդվածներ, քերականական վարժություններ, կանոններ, որոնք ուսուցանվելու են՝ սերտորեն կապված ընթերցանության, գրելու, կարդալու նյութերի հետ՝ որպես նրանցից բխող աշխատանք:

Ժխտելով հին գրաբարալեզու դասագրքերը, որոնց բովանդակությունը հիմնականում կրոնական նյութեր էին՝ սաղմոսներ, շարականներ, սրբոց վարքեր ու բիբլիական առասպելներ, Աբովյանը առաջադրում է կազմել այնպիսի ձեռնարկներ, որոնց հիմքում ընկած լինեն մարդասիրական գաղափարներ, սեր դեպի հայրենիքն ու ժողովուրդը, նրա լեզուն ու գրականությունը, ընկերն ու ծնողը, բարություն, ուղղամտություն, ճշտապահություն:

Աբովյանի կողմից ծնունդ առան մայրենիի ուսուցման և գրաճանաչության հնչական մեթոդները: «Նախաշավիղը» մերժեց գրերին անուններ տալով դասավանդելու միջնադարյան եղանակը՝ առաջ քաշելով հնչական մեթոդը, ըստ որի՝ տառերը արտաբերվում են իրենց բնական հնչմամբ: «Զամենայն տառս պարտէ ըստ բնական հնչմանն արտասանել»,-գրում է Խ.Աբովյանը (Աբովյան Խ.,1940): Նա իր դասագրքով մերժեց նաև եկեղեցու սրբագործած լեզուն՝ գրաբարը: Իր գործունեության սկզբից նեցուկ կանգնեց աշխարհաբարին:

Կրթության և դաստիարակության հիմնախնդիրները հնարավորություն են տվել Աբովյանին որոշակի ընդհանրացումներ կատարելու և դրանց հիման վրա մայրենիի ուսուցման գործընթացը առավել արդյունավետ դարձնելու ուղիներ մշակելու: Նա կարծում էր, որ կրթության դաստիարակչական ներգործության արդյունավետությունը դասագործընթացում կախված է մեթոդական համալիրի արդյունավետ կիրառումից, իսկ մեթոդի տեղին ու նպատակային գործադրումը՝ ուսուցչից, նրա մանկավարժական վարպետությունից: Մեթոդը իրականության ճանաչման անհրաժեշտ միջոց և գործիք է: Այն որոշակի սկզբունքներով,

կանոններով, հնարներով իրականացվող գործունեություն է, որ կոչված է ապահովելու տրված նպատակը տանող ուղին: Ուսուցման մեթոդը ուսումնական խնդիրների լուծմանը միտված, սովորողների իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող մանկավարժի նպատակաուղղված գործողությունների համակարգ է: Մեծ մանկավարժը խիստ կարևորում է, որ ուսուցիչն ունենա ներհուն միտք, ճանաչի մանկան ներաշխարհը, կարողությունները: Փորձ է անում մշակելու մեթոդական, դիդակտիկական, հոգեբանական, մանկավարժական նոր համակարգ: Սաներին հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակելու գործում մեծ տեղ էր տալիս ուսուցչի անձնական օրինակին: Այս առնչությամբ մեծ մանկավարժը առաջ է քաշել այն դրույթները, որոնք այժմ էլ ընկած են արդի կրթական համակարգի հիմքում, որտեղ նշվում է, որ ուսուցչի բարոյական նկարագիրը, մեթոդական պատրաստվածության մակարդակը, նրա անձնական և ինտելեկտուալ որակները դաստիարակչական մեծ ուժ ունեն: Ուսուցիչը ամեն կերպ պետք է սատարի մատաղ սերնդի մեջ հայրենասիրության ոգու արթնացմանն ու ծավալմանը: Նա իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին, դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու հնարավորություն պիտի ունենա: Պահանջվում է նաև մասնագիտական իրազեկություն, անձնային որակներ և մտածողության ճկունություն, նոր գաղափարներ ստեղծելու, կանխատեսելու, հիմնախնդիրը տեսնելու և այլ կարողություններ:

Ելնելով «Նախաշավիղ»-ում առաջ քաշած մեթոդամանկավարժական դրույթներից՝ Աբովյանը կարևորում է դասի ընդհանուր և ակնհայտ նպատակի որոշակիությունը, համապատասխան մեթոդի ընտրությունը, ուսուցման սկզբունքները, դասի բովանդակությունը: Մեծ մանկավարժին հուզող վերոնշյալ դրույթները իրենց արտացոլումն են գտել արդի կրթական համակարգում: Հիմք ընդունելով մանկավարժության տեսությունը և պրակտիկան, ժամանակակից հայոց լեզվի օրինաչափությունները՝ մեթոդիկան առաջադրում է ուսուցման նպատակներից բխող երեք ուղիներ՝ ի՞նչ սովորեցնել, ինչպե՞ս սովորեցնել, ինչո՞ւ հենց այդպես և ոչ թե այլ կերպ սովորեցնել: «Ի՞նչ սովորեցնել» հարցի պատասխանը «Հայոց լեզու»

առարկայի ուսուցման բովանդակությունն է, որը որոշվում է պետության կողմից հաստատված ծրագրով և դրա հիման վրա ստեղծված դասագրքերով: «Ինչպե՞ս սովորեցնել» խնդիրը լուծելու համար դիտարկվում են մանկավարժության մեջ ընդունված մեթոդները, եղանակները, հնարները, վարժությունների համակարգը, կիրառական առաջադրանքները, առանձին դասերը:

Ինչու՞ այդպես և ոչ թե այլ կերպ սովորեցնելը կարևորվում է, որովհետև ուսուցման գործընթացում յուրաքանչյուր մանկավարժ պետք է գիտակցորեն կատարի իր քայլերը, համեմատի, հակադրի մեթոդները:

Երեխայի մտավոր և բարոյական զարգացումը Աբովյանն առավելաբար կապում էր մայրենիի հետ՝ նշելով, որ մտածողությունն ու լեզուն սերտորեն կապված են միմյանց հետ և փոխադարձաբար ներգործում են միմյանց վրա: Արդի փուլում ուսուցման առաջնահերթություններից է նույնպես մայրենի լեզվի անթերի իմացությունը, որը բազմաբնույթ գիտելիքներ ձեռք բերելու, մշակութային արժեքներին հաղորդակից դառնալու, սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու բացառիկ միջոց է: Մայրենիի առանձնահատուկ դերը արժեքային համակարգի, սովորողի ազգային նկարագրի, բարոյական կերպարի ձևավորումն է:

Հայտնի է, որ ուսուցման ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրության հարցերով զբաղվում է դիդակտիկան: Աբովյանի մանկավարժական ժառանգության մեջ արժևորվում են դիդակտիկայի հարցերին նվիրված նրա մեկնաբանությունները, որոնք այսօր էլ իրենց տեսական և գործնական արժեքը չեն կորցրել: Դրանց կիրառումը կրթության արդի փուլում կարևոր նշանակություն ունի լեզվի գործնական խնդիրների ճիշտ լուծման համար: Սրանք վերաբերում են գիտելիքների հաղորդման, աշակերտների կարողությունների, հմտությունների մշակման աշխատանքի մանկավարժական և հոգեբանական կողմերին:

Աբովյանը «Նախաշավիղի» ընթերցարանում դիդակտիկական սկզբունքներից մեծ ուշադրության է արժանացրել զննականությանը, որը ընդլայնում է աշակերտի մտահորիզոնը: «Երեխան պետք է ճանաչի իրականությունը, բնական երևույթները: Տեսածը, շոշափածը բովանդակություն է դնում սովորած բառերի և հասկացությունների մեջ» (Աբովյան Խ.,1940): Առաջադրում է իրականացնել դեպի

բնություն կատարվող էքսկուրսիաները, մատնանշում է իրազննական դասերի անհրաժեշտությունը: Էքսկուրսիաները համարում է «բնական ուսուցում»: Ընթերցարանում մեծ տեղ է հատկացրել իրազննական նյութերին՝ լեզվի ուսուցումը սերտորեն կապելով որոշակի առարկաների, երևույթների դիտման, զննականության հետ (Աբովյան Խ., 1940):

Արդի կրթությունն այսօր էլ կարծում է, որ մատաղ սերնդի հոգում կենդանի և անկենդան բնության նկատմամբ սեր և հոգատար վերաբերմունք ձևավորելը թե՛ հանրակրթական դպրոցի, թե՛ ամեն մի առանձին ուսուցչի պարտականությունն է:

Մայրենի լեզվի ուսուցումը մեծ մանկավարժը սերտորեն կապում է աշակերտների մեջ գիտակցականության և ինքնուրույն կերպով մտածելու կարողություն մշակելու հետ: Նա կիրառեց դիդակտիկայի գիտակցականության սկզբունքը, որով լուրջ հարված հասցրեց սերտողական ձևական մեթոդներին: Մայրենիի ուսուցման գործընթացում այսօր գիտակցականության սկզբունքը դասընթացի առաջնահերթություններից է, ինքնուրույնությունը՝ յուրացումը իրականացնելու արդյունավետ գործոն: Երեխաները հակված են ամեն ինչի մեջ իմաստ տեսնելու: Այն գիտելիքներն են անցնում երկարատև հիշողության ոլորտ, որոնք աշակերտը գիտակցաբար է ցանկանում յուրացնել: Այս դեպքում է միայն գիտելիքը անձի համար իմաստ ու արժեք ստանում, դառնում հոգևոր հարստություն: Իսկ ինքնուրույնությունը մարդու՝ սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու ընդունակությունն է: Ինքնուրույնության բարձր մակարդակը մատնանշում է մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը, ինքնագիտակցության, նաև հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը:

Ընթերցանության դասի հիմնական խնդիրներից մեկը համարելով աշակերտների գրավոր և բանավոր խոսքի մշակումը՝ Աբովյանն արագ արդյունք ստանալու համար առաջադրում էր կարդացած բնագրի շուրջ կատարվող վերլուծական աշխատանքներ, որոնք զարգացնում են աշակերտի դատողությունը, համեմատություններ և հակադրություններ անելու կարողությունը:

Նշենք, որ լեզվի ուսուցումը սերտորեն առնչվում է մտածողությանը: Մտածել,

պրոբլեմներ հաղթահարել աշակերտները սովորում են՝ դրանք լուծելով, մտածել սովորում են մտածելով, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելով: Աբովյանը դեռևս իր ժամանակներում նկատել է մայրենի լեզվի և տրամաբանության կապը: Արդի կրթությունը ևս աշակերտի մեջ ձևավորում է ընդհանրացման ու կոնկրետացման, համակարգման, հիմնավորման ու ապացուցման, համեմատության, վերացարկման, վերլուծության ու համադրման, ինդուկցիայի և դեդուկցիայի մտավոր գործողությունների կարողություններ, որոնք իրականացվում են միայն տրամաբանության օգնությամբ:

«Նախաշավիղի» ընթերցարանում Աբովյանը արժևորում է նաև դիդակտիկայի հոգեբանական սկզբունքներից մեկը. կարևորվում են երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Առաջադրում է ուսուցումը սկսել երեխաներին արդեն հայտնի, ծանոթ առարկաների ու երևույթների զննությունից և աստիճանաբար գնալ բոլորովին նոր հասկացությունների հաղորդումը: Սրանով առաջ է մղվել նաև ուսուցման մատչելիության դիդակտիկական սկզբունքը: Ժամանակակից կրթական համակարգում նշվում է, որ լեզվի մեթոդիկան կապված է նաև մանկավարժական հոգեբանության հետ, որը մեթոդիկային հոգեբանական հիմք է տալիս ուսուցման գործընթացը հոգեբանորեն ճիշտ կազմակերպելու համար: Առանց երեխաների տարիքային առանձնահատկությունների հաշվառման, առանց գիտելիքների ընկալման և այդ գիտելիքները գործադրելու կարողությունների ու հմտությունների մշակման գործընթացի գիտական կազմակերպումը հնարավոր չէ: Երեխայի հոգեկան ու ֆիզիկական զարգացման օրինաչափությունների, դրանց դրսևորման առանձնահատկությունների մասին ժամանակակից հոգեբանությունը կուտակել է բավական փաստեր, որոնք մանկավարժներն անհրաժեշտաբար պիտի հաշվի առնեն ուսուցման մեթոդներ մշակելիս: Իհարկե, աբովյանական մոտեցումներն ու հայացքները նույնն են, ինչ այժմյան կրթահամակարգինը, սակայն ժամանակակից մեթոդիկան առանց ուսուցման գործընթացի հետազոտության հոգեբանական նորագույն տվյալների օգտագործման չի կարող կյանքի աճող պահանջները բավարարել, ուսուցումը դյուրին, արդյունավետ և միաժամանակ գիտական ու նպատակային դարձնել:

Աբովյանի առաջադրած հիմնական սկզբունքներից մեկն էլ մայրենի լեզվի և

գիտելիքների համատեղ ուսուցումն է, որը հանգեցրեց տարրական դասարաններում գործնական ճանապարհով մայրենիի ուսուցման բացատրական մեթոդին (Աբովյան Խ.,1940):

Հատկապես տարրական դասարաններում առաջադրում է քերականությունը դասավանդել գործնական ճանապարհով: Իր այս դիտարկումներով նա առաջադրում է մայրենի լեզվի ուսուցման գործընթացում ապահովել տեսական և գործնական գիտելիքների կապը: «Այդպես կրթեցան ատենաբանք, բանաստեղծք, հռետորք Յունաց և հռովմայեցվոց, զի գործնականությամբ, մանավանդ քան իմացականությամբ ուսան զիւրյեանց լեզու» (Աբովյան Խ.,1950):

Արդի կրթական համակարգում արծարծվում են աբովյանական նույն դիտարկումները: Չնսեմացնելով տեսական հիմնարար գիտելիքների դերը՝ կրթության մեջ կարևորություն է տրվում ուսուցման գործնական ուղղվածությանը: Ուշադրություն է դարձվում այն գիտելիքներին ու կարողություններին, որոնք, ենթադրվում է, կիրառություն կգտնեն գործնական կյանքում: Ուսուցման գործնական ուղղվածությունը կարևորվում է ոչ միայն ստացած գիտելիքների մնայունության ապահովման և կենսական տարբեր իրադարձություններում նրանց կիրառման տրամաբանությամբ, այլ նաև սովորողների մեջ կայուն ուսումնական մոտիվացիա ձևավորելու անհրաժեշտությամբ: Իմաստալից, անձնային նշանակություն ստացած գիտելիքը հզոր գործոն է և կարող է սովորողների ապագա մասնագիտական կողմնորոշման մեջ լուրջ դերակատարում ունենալ (Տեր-Գրիգորյան Ա., 2007):

Աբովյանը առավելաբար մանրամասնորեն է մշակել մայրենի լեզվի դասերին տարվող բառային աշխատանքի ձևերն ու մեթոդները, բառիմաստի բացատրման տարբեր հնարներն ու միջոցները, որոնցից մասնավորաբար կարևորել է աշակերտների ու ուսուցչի միջև տարվող գործուն, երկկողմյան զրույցը, որը նա համարել է աշակերտի միտքը, հոգին բաց անելու, հաղորդած գիտելիքների արդյունավետ յուրացումն ապահովելու միջոց: Նշենք, որ զրույցի մեթոդի ակնհայտ առավելությունները նկատելի են ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից աշակերտակենտրոն մեթոդների համակարգում:

Զրույցն ուղղված է սովորողին այս կամ այն հարցի շուրջ խորհրդածելու մղելուն: Ուսուցիչը հատուկ կազմակերպված հարցերի միջոցով դրդում է

աշակերտին դատողություններ և վերլուծություններ կատարելու փաստերի և երևույթների մասին, որոնց արդյունքում սովորողն ինքնուրույն հասնում է համապատասխան եզրակացությունների և ընդհանրացումների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խ. Աբովյանը այս դասագրքով իր ժամանակի դպրոցներից դուրս մղեց գրաբարալեզու ձեռնարկները և ներմուծեց աշխարհիկ բովանդակությամբ, ժողովրդական լեզվով գրված դասագիրք:
2. Աբովյանի և մանկավարժության ազգային ինքնության նոր մոտեցումները, որոնք մանկավարժների տասնյակ սերունդների աշխատանքի և դպրոցի դարավոր փորձի արդյունք են, պահանջում են ձևավորել մարդուն անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ, որոնք բխում են ժամանակակից դիդակտիկայի մանկավարժական սկզբունքներից:
3. Խ. Աբովյանն իր առաջադիր դրույթներով հասարակության լիարժեք անդամ դարձնելու համար մարդուն մղում է իր մեջ զարգացնելու քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները, ինքնուրույնությունը, դժվար իրավիճակներում կողմնորոշվելու և վճիռներ կայացնելու հմտությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբովյան Խ. (1940). *Նախաշավիղ. Կրթութեան ի պետս նորավարժից, Լուսապիպ նմանահանություն, Առաջաբանով յեվ ծանոթություններով Ռուբեն Զարյանի,* Յերեվան: Հայկական ԽՍՀ պետական հրատարակչություն.

Աբովյան Խ. (1950). *Երկերի լիակատար ժողովածու, հ. 5,*. Երևան: ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ. ին-տ,

Տեր-Գրիգորյան Ա. Ե. (2007). *Մանկավարժական դիմանկարներ, գիրք Բ.* Երևան: Էդիթ Պրինտ.

REFERENCE LIST

Abovyan H. (1940). Pahshavih. *(Nakhashavigh).* Ot novichka k obrazovaniyu,

Fotoportret, S predisloviem i predisloviyami Rubena Zaryana, Gosudarstvennoe izdatel'stvo Armyanskoj SSR, Erevan: Erevan. Fotoimitaciya.

Abovyan H. (1950). Polnoe sobranie stran. *(Complete work collection).* Vol. 5, Erevan: GA SSSR M. posle Abegyana pisatel' in-t.

Ter-Grigoryan A. E. (2007). Pedagogicheskie portrety.*(Pedagogical observations).* kniga B. Erevan. Edit Print:

РЕЗЮМЕ

ВАЖНОСТЬ ПЕДАГОГИЧЕСКИХ ПОЛОЖЕНИЙ УЧЕБНИКА Х. АБОВЯНА «НАХАШАВИГ» В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ ОБУЧЕНИЯ

ГАЯНЕ ХАЛАТЯН

В данной статье мы исследовали роль учебника «Нахашавих» Х. Абовяна в армянской школе и педагогике. Своим учебником Абовян вытеснил руководства, содержащие религиозные оды, написанные на Грабаре (старо-армянском языке), и заменил их мирским содержанием, написанным на народном языке, в котором были статьи, предусмотренные для обучения сочинению содержания, упражнения, правила, нацеленные на развитие навыков чтения и письма. Абовян отверг учебники на Грабаре и предложил создать такие руководства, которые были основаны на гуманистических идеях. Автор попытался создать новую методическую, дидактическую, психологическую и педагогическую систему. Согласно Абовяну, первоочередное положение в педагогике – определенность общей и очевидной цели урока, выбор соответствующего метода, принципы обучения, содержание урока. Выдвинутые принципы являются приоритетными в современной системе образования. Комментарии, посвященные дидактическим принципам, высоко ценятся в наследии Абовяна и по сей день не потеряли своей практической ценности.

В учебнике «Нахашавих» автор обращает особое внимание наглядности как дидактическому принципу. Абовян связывает обучение родному языку с развитием у

студентов принципа сознательности и умения самостоятельно думать. Он использовал принцип сознательности в дидактике. Согласно Абовяну, обучение родному языку связано как с логикой, так и с психологией.

Наша цель - применить Х. Ведущие педагогические дидактические принципы Абовяна в современной системе образования, которые будут способствовать легкому восприятию учебного материала и использованию учителем приемов.

Ключевые слова: фонетика, дидактика, наглядность, принцип сознания, логика, психологический принцип.

ABSTRACT

THE IMPORTANCE OF PEDAGOGIC PROVISIONS OF "NAKHASHAVIGH" TEXTBOOK BY KH. ABOVYAN IN MODERN CONDITIONS OF TEACHING

GAYANE KHALATYAN

The article discusses the role of Kh. Abovyan's "Nakhashavigh" textbook in Armenian school and pedagogy. Abovyan rejected the textbooks in Grabar and created manuals based on humanistic ideas. The educator worked out a new methodology: didactic, psychological and pedagogic system. According to Abovyan, the primary provision of pedagogy is lesson goal, choice of appropriate method, principles of teaching, content of lesson. The suggested provisions are among the priorities of modern educational system. The comments dedicated to didactic principles are highly appreciated in Abovyan's legacy and they haven't lost their theoretical and practical value.

In "Nakhashavigh" textbook the author paid much attention to the visibility as a didactic principle. According to the author, what is seen, felt gives content to the words and notions learnt. Abovyan connects teaching the native language with developing in students the principle of consciousness and the ability of thinking on their own. He used the principle of consciousness in didactics. According to Abovyan, teaching native language is connected both with logics and activation of psychological processes.

Our goal is to apply Kh. Abovyan's leading pedagogical didactic principles in the

modern education system which will contribute easy perception of academic material and use of modes by teacher.

Keywords: phonics, didactics, visibility, principle of consciousness, logics, psychological principle.

Հոդվածը ստացվել է՝ 14.04.2022 :

Հոդվածը ուղարկվել է գրախոսման՝ 02.05.2022:

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 14. 06.2022: